ԱՆՀԱՏ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ

ՀԵՏԱՔՐՔՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՐԱՎԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ԱՌԵՎՏՐԻ ԽԹԱՆՄԱՆ և ՈՐԱԿԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ» ԾՐԱԳԻՐ

ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՎԱՐԿ No. 8390-AM

ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ *ԳՆՈՒՄՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ (ԼՐԻՎ ԴՐՈՒՅՔՈՎ ԱՇԽԱՏԱՆՔ)*

ՓԱԹԵԹԻ ՀԱՄԱՐԸ (ՀԱՄԱՁԱՅՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԻ)՝ TPQI-C-4.1.6

Հայաստանի Հանրապետությունը վարկ է ստացել Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի (ՎԶՄԲ/IBRD) կողմից՝ «Առևտրի խթանման և որակի ենթակառուցվածքի ծրագրի» համար (հետայսու՝ Ծրագիր) և նպատակ ունի ծրագրային միջոցների մի մասն օգտագործել խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման համար:
Ծրագրի զարգացման նպատակն է ուժեղացնել կառավարության կարողությունները՝ ընկերություններին արտահանման խթանման, ներդրումների ներգրավման և որակի կառավարման ծառայությունների մատուցման ոլորտում:
Ծրագրի ընդհանուր համակարգումը կիրականացվի ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից՝ Ծրագրի կառավարման գրասենյակի (ԾԿԳ) միջոցով: Ծրագրի կառավարման գրասենյակը համակարգելու է միջոցառումները ամենօրյա կտրվածքով, այդ թվում նաև համապատասխան իրականացնող գերատեսչությունների հետ հաղորդակցությունը և Ծրագրի մոնիթորինգը և գնահատումը:
ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» ՊՀ-ն (ՀՀ ՖՆ ԱՖԾԿԿ) պատասխանատու կլինի Ծրագրի շրջանակներում հատկացումների, ֆինանսական կառավարման և գնումների գործառույթների իրականացման համար: ԾԿԳ-ն կհամակարգի ԱՖԾԿԿ-ի հետ՝ Ծրագրի արդյունավետ իրականացումն ապահովելու համար:

Սույն հանձնարարականի նպատակն է Ծրագրին տրամադրել տեխնիկական աջակցություն գնումներին առնչվող հարցերում և ապահովել ծրագրի իրականացումը համաձայն Համաշխարհային բանկի ուղեցույցների:

Ուստի ՀՀ ֆինանսների նախարարության “Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն” ՊՀ-ն հրավիրում է պահանջներին համապատասխանող բոլոր անհատ խորհրդատուներին ներկայացնել ծառայությունների մատուցման առնչությամբ հետաքրքրվածության իրենց հայտերը:

Հետաքրքրված անհատ խորհրդատուները պետք է ներկայացնեն ինքնակենսագրական թերթիկ, ինչպես նաեւ այլ տեղեկատվություն՝ մատնանշելով, որ վերջիններս համապատասխան որակավորում ունեն վերոնշյալ ծառայությունների մատուցման համար:

Խորհրդատուն ծառայություններ կմատուցի սկզբնական 1 տարի ժամկետով: Գոհացուցիչ կատարողականի դեպքում պայմանագիրը կարող է երկարացվել:

Որակավորման պահանջներ

Հանձնարարականի իրականացման համար կվարձվի անհատ խորհրդատու, որը պետք է ունենա՝

- Բարձրագույն կրթություն ֆինանսների, բիզնես կառավարման, տնտեսագիտության ոլորտում (համապատասխան ոլորտում) ,
- Նվազագույնը 5 տարվա աշխատանքային փորձ նմանատիպ պաշտոնում և Համաշխարհային բանկի ծրագրերի շրջանակներում համապատասխան ոլորտում աշխատելու 3 տարվա աշխատանքային փորձ,
- Իր պարտականությունների իրականացման համար անհրաժեշտ իրավական ակտերի՝ մասնավորապես ՀԲ գնումների գործընթացների իմացություն,
- Հայերեն լեզվի գերազանց իմացություն (բանավոր և գրավոր), անգլերեն և ռուսերեն լեզուների լավ իմացություն,
- Տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու և տրամաբանելու կարողություն,
- Համակարգչային գիտելիքներ՝ մասնավորապես MS office ծրագրի, ինտերնետով աշխատելու ունակություն,
- Կազմակերպչական, հաղորդակցման, միջազգային հարաբերությունների կարգավորման հմտություններ և թիմային աշխատանքի հմտություններ,
- Մեծ ծանրաբեռնվածությամբ աշխատելու ունակություն:

Հետաքրքրված խորհրդատուներին խնդրում ենք հատուկ ուշադրություն դարձնել 2011 թ. հունվարին հաստատված Համաշխարհային Բանկի «ՎՋՄԲ փոխառությունների եւ ՄՋԱ վարկերի և դրամաշնորհների շրջանակներում Համաշխարհային Բանկի Փոխառուների կողմից Խորհրդատուների ընտրություն եւ աշխատանքի ընդունում» Ուղեցույցների (Խորհրդատուների ուղեցույց) 1.9. պարբերությանը, որտեղ շարադրված է Համաշխարհային Բանկի քաղաքականությունը շահերի բախման վերաբերյալ:

Անհատ խորհրդատուի ընտրությունը կիրականացվի 2011 թ. հունվարին հաստատված Համաշխարհային Բանկի «ՎԶՄԲ փոխառությունների եւ ՄԶԱ վարկերի և դրամաշնորհների շրջանակներում Համաշխարհային Բանկի Փոխառուների կողմից Խորհրդատուների ընտրություն եւ աշխատանքի ընդունում» Ուղեցույցների շրջանակներում սահմանված Բաժին V-ում ներկայացված Անհատ խորհրդատուների ընտրության մեթոդի ընթացակարգերի համաձայն:
Հետաքրքրված անհատ խորհրդատուները հավելյալ տեղեկատվություն ստանալու նպատակով կարող են դիմել ստորեւ ներկայացված հասցեով տեղական ժամանակով 09:00-ից 18:00 ընկած ժամանակահատվածում:

Հետաքրքրվածության հայտերը պետք է ներկայացվեն ստորև ներկայացված հասցեով (անձամբ, կամ փոստով, կամ էլ-փոստով) **մինչեւ 2016 թ. հունվարի 15-ը, ժամը 18:00**:

ՀՀ ֆինանսների նախարարության
“Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն” ՊՀ
Գործադիր տնօրեն
պրն. Էդգար Ավետյանին
Հասցե՝ Տիգրան Մեծ 4, 3-րդ հարկ, Երեւան, ՀՀ
Հեռ՝ (374-11) 91 05 81
Էլ-փոստ՝ info@ffpmc.am